

ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՎՍԱԿՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՇՆՉՈՂ ԳԻՐՔ

Ռիբա Քրիստինա Կույուճյան, XX դարի առաջին ցեղասպանությունը. Չայկան հիշողության վերադարձը, իսպաներենից թարգմ. Շուշան Սիրույան, Երևան, 2012, 360 էջ:

Այսպես է վերնագրված արգենտինահայ մեծապարիվ փիլիև Ռիբա Քրիստինա Կույուճյանի հայոց ցեղասպանությանը նվիրված գիրքը, որ ընթերցողի առջև ներդնում է, հոգեվերլուծական եղանակներով է բացում Ի. դարի առաջին ցեղասպանության զարհուրելի պարկերը՝ դրա հետ ամենավաղ բազմաթիվ հարցերով, պարճառահեղություններով, կապերով, հավասարի վկայություններով ու եզրակացություններով:

Որքան էլ մեր ժողովրդի հետ կապված իրադարձությունները մոտ են հեղինակի սրբին, նա կարողանում է այդ ամենի վրա հեռվից հայացք նետել ու նպաստել, որ ամեն բան հասկանալի դառնա նաև ոչ հայ ընթերցողի համար:

Այդ նպատակով խորացված կերպով ներկայացնում է հայ ժողովրդի պարմությունը՝ ինչ ճանապարհ է անցել, ինչն է արել, ինչպես է հայրնվել թուրքերի հետ նման հարեություններում, իր պարմական հայրենիքում դարձել վտարանապետություն, անցանկալի փորը, բռնադատվել է ու նսեմացվել:

Դա ավելի ու ավելի է ընդգծվել ԺԹ. դարում, երբ Օսմանյան կայսրությունն սկսել է թուլանալ, մեկը մյուսի երկնից փարածքներ կորցնել (Նունասարանի, ապա և՛ Բուդաբիայի, Ռումինիայի, Մերքիայի, Մոնպե-Նեգրոյի անկախացումները): Թուրքիայում ոչ մոտավորանների նկարմամբ հասարակում է է՛լ ավելի խորական կոշտ քաղաքականություն, գեներ կրելու իրավունքից զրկում, վարում իշխանական ենթակառուցվածքներից և այլն:

Այնինչ, Օսմանյան կայսրության մեջ մարտը հիշյալ երկրների անկախացումը ոգևորության նոր լիցքեր է հաղորդում մանավանդ երապական համալսարաններում կրթություն ստացած հայ երիտասարդներին, նրանց փոքրում ազատագրական գաղափարներով: Դա չէր կարող չզգացվել ու չնկարվել թուրքական իշխանությունների կողմից, որոնք փազնապով էին հետևում այդ ոգևորություններին ու խմբումներին, որ առավել ցայտունորեն էին դրսևորվում ռուս-թուրքական այլևայլ հարաբերությունների ժամանակ:

Եւ քիչ առ քիչ հաստատում էր հայերին (մանավանդ՝ իրենց ենթակայության փակ ապրողներին) իբրև ներքին թշնամի դիտելու, զանազան միջոցներով նրանցից ազատվելու գաղափարը: Նայագիների ֆիզիկական ոչնչացման անհրաժեշտության մասին դեռևս ԺԹ. դարի վերջին պարզ ու անթաքույց արտահայտվել է մեծ վեգիր Բյամիլ փաշան. «Եթե հայ ցեղը վերանա, եթե քրիստոնեական Երոպան դաշնակից փնորի ասիական Թուրքիայում ու չգրնի նրան, կկարողանանք հանգիստ ապրել, պարշաճ կերպով զբաղվել մեր ներքին հարցերով»:

Միաժամանակ թուրքական իշխանություններին (անկախ կառավարման համակարգից) այդ հրեշային ծրագրին էր հանգեցրել դեպի եւր, դեպի արևելք՝ իրենց արմատներին վերադառնալու, համաթուրքականություն հաստատելու գաղափարը, որի իրագործման ճանապարհին պետք էր անխնա վերացնել ամեն մի խոչընդոտ: Նման խոչընդոտներից մեկն էլ հայերի, իբրեւ «քրիստոնեական կղզու» անցանկալի գոյությունն էր, որ նրանց հանգիստը չէր տալիս՝ հակառակ երբեմն-երբեմն դրսևորվող կեղծ թողութությունների ու սիրալիրությունների, որոնցից մեկն էլ 1908 թ. հեղափոխությունն էր, երիտթուրքերի գահ բարձրանալն ու նոր օրենքների հրապարակումը:

Բայց այն, ինչ սերնդեսերունդ մըմըմում էր մաս առ մաս իրագործում էին նախորդները, ավելի լայն ու խոր ընդգրկմամբ իրագործեցին հենց այդ առաջադիմական օրենքների հեղինակ երիտթուրքերը: Պարզապես փոխվել էին պայմանները, անսպասելիորեն եկել էին իրենց սևեռում գաղափարն իրագործելու նպատակով ժամանակներ:

Ինչպես նկատում է գրքի հեղինակը, «Առաջին աշխարհամարտի իրադարձությունները վերածվեցին մի կառույցի, որ ոճրագործություններն իրականացնելու իդեալական հնարավորություն ընձեռեց թուրքական պետությանը»:

Հայերի ֆիզիկական ոչնչացմանը գումարվում է նրանց մշակութային հարուստ ժառանգության (գրավոր հիշարարարաններ, մարյաններ, վանքեր, եկեղեցիներ, այլուայլ արժեքավոր հուշարձաններ) հիմնովին վերացման ծրագիրը: «Դրանով, գրում է Ռիպա-Ք. Մույումջյանը, ցեղասպան պետությունը նպատակ է հետապնդում հավաքական հիշողության մեջ ամրապնդել, թե այդ ժողովուրդը երբեք գոյություն չի ունեցել: Դա միաժամանակ նպատակ է հետապնդում վերացնել ոճրագործության բոլոր հետքերը»:

1915 թ. փետրվարի 2-ին Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին փողեկացնում է իրենց ծրագրերի մասին՝ խնդրելով, որ նրա կառավարությունը չխոչընդոտի դրա իրականացմանը:

Իսկ մի քանի օր անց թուրքական կառավարության և իշխող կուսակցության միջև կապ հանդիսացող Բեհաեդդին Շաքիրը կուսակցության Ադանայի շրջանի քարտուղար Ջեմալ Բեյին գրում է. «Որոշվեց բնաջնջել բոլոր հայերին. որեւէ մեկը ողջ չի մնալու... Կառավարությունը ջարդերի կազմակերպման մասին համապատասխան հանձնարարականներ է տալու նահանգապետներին և բանակի ղեկավարներին: Կուսակցության ներկայացուցիչներն իրենց շրջաններում պարտավոր են համագործակցել և որեւէ հայի օգնություն կամ օժանդակություն ստանալը կանխարգելել»:

Այսպես, որեւմն՝ ամեն ինչ նախապես ծրագրվել է, մանրամասնորեն մշակվել և բաժանվել է փուլերի՝ մրավորականության գլխարկում, փղամարդկանց ոչնչացում, մնացած բնակչության վերացում:

Եւ սկսվում է մեծ ցեղասպանությունը՝ վերաբնակեցման, թեկուզև աքսոր կոչվածի «իրավական» շրջանակներում, իբրեւ թե պարերագմական պայմանների թելադրանքով՝ ավելի ապահով, մարտերի շրջաններից հեռու վայրեր փեղափոխելու պարտավորվով, իսկ նրանց սեփականությունը (մեծ մասամբ կառավարված փոխ, գանձեր, անասուններ, արքա ու այգիներ), իբր, հետագայում ենթակա էր վերադարձման: Իսկ թե ինչո՞ւ թուրք

բնակչությանն ավելի ապահով վայրեր չէին պեղափոխում, ո՞վ կարող էր հարցնել: Եւ այդպես՝ անպաշտպան հայ կանայք, երեխաներն ու ծերերը արտաքին ղեկավար Սիրիայի ու Միջագետքի անապատները՝ կիսամերկ, բոքիկ ու ծարավ, ամեն քննությունների, նվաստացումների ենթակա, խռովանգված ու սարսափահար, որի նպատակն էր ֆիզիկական վերացումից առաջ ջարդել հայկական անկոտորում ու համառ ոգին:

Ձեռքի քրակ ունենալով վերապրող կամ ժառանգորդ մի շարք հեղինակների հավասարի նկարագրությունները հայերի կրած անլուր պառապանքների մասին՝ հեղինակն այդ ամենն անցկացնում է հոգեվերլուծության բուրայով, դիտարկում նշանավոր հոգեվերլուծաբանների (Ջ. Ֆրոյդ, Բ. Բոլլաս և այլն) քննադատություն, թե հոգեկան ինչպիսի հարվածների ու ցնցումների են ենթարկվել այդ հեղինակներն ու նրանց նկարագրած դժոխքի պարունակներով անցած մարդիկ: Կարծում եմ, սակայն, Ռ. Բ. Կույումջյանը հարկ եղածից ավելի է հենվել հիշյալ հոգեվերլուծաբանների, մասնավորապես՝ Ջ. Ֆրոյդի դրույթների վրա, որոնք շատ դեպքերում արհեստականորեն են մերվում հայկական ցեղասպանության առանձնահատուկ դրսևորումների հետ:

Նիմանականում Կույումջյանն օգտվել է Նայ Ավետարանական Եկեղեցու հոգևոր հովիվ Աբրահամ Ն. Նարությունյանի «Ոչ ծիծաղել, ոչ լացել» (1938 թ.), բժիշկ Կարապետ Խաչերյանի «Իմ սարսափելի փորձը 1922 թ. Իզմիրում», Մայքլ Ադլեն Կրպուերի «Անցում ղեկի Արարապ» (1975 թ.) և Էդուարդ Պարոյանի «Նայիկ. մեկ ու կես միլիոն ձայնի լուրջան ելքում» (1991 թ.) գրքերից՝ օգտագործելով «կենսագրական մեթոդը», որ այլ բան չէ, քան պարբերաբար անդրադառնալն ու ներկայացնելը նրանցում առկա կարևորագույն փաստաթղթերի՝ ինքնակենսագրություններ, անձնական փորձի մասին պատմություններ, իրենց կյանքի վճռորոշ պահերի ապրումներ...

Նիշյալ, ինչպես և ցեղասպանության վերաբերյալ մեզ ծանոթ շատ այլ գրքեր մեծ մասամբ ինքնակենսագրական են, ներկայացնում են այն ամենը, ինչ վերապրած հեղինակները (կամ ժառանգները՝ նրանց աչքերով) քննել ու ապրել են՝ սկսած քեղահանություններից առաջ արդեն իսկ շրջանառվող լուրերից, թե հայերին կոտորելու են, այնուհետև իրենց կրած անմարդկային պառապանքներից, սպառնացումներից, իրար հաջորդող դժոխային քննարկումներից, որ շարերին շատ անգամ անիրական ու երազ են թվացել, մինչև ուշաթափվելը... և հրաշքով ինչ-որ կերպ ինչ-որ քեղ ողջ մնալը:

Իսկ այս գիրքը պարբերվում է նրանցից, քանի որ ներառում է այլ հեղինակների ճշմարիտ վկայություններն ու սարսափելի պատկերները, որ քեղ-քեղ խմբավորվում, ի մի են բերվում՝ ինչ-որ բաներ ընդհանրացնելու, ավելի որոշակիացնելու, ինչ-որ քեղ առանձնացվում են՝ դարձյալ ինչ-որ բան ավելի քննադատելի դարձնելու նպատակով: Մա վերլուծական գիրք է, որի մեջ «համաքեղվում են պատմական, քաղաքական, գրական և հոգեվերլուծական փաստարկները»:

Շարունակելով մարտումները իր երկարաբուն աշխատանքի արդյունք այս գրքի շուրջ՝ առաջաբանում հեղինակը նկատում է. «... բազում են այս ուսումնասիրությունը կարարելու դրդապատճառները, սակայն, մշտապես առկա է մի հիմնական հարց. ինչո՞ւ

է լռության մարմնով մեկ եւ կես միլիոն հայերի մահը գրեթե մեկ դարի ընթացքում, եւ ինչո՞ւ է դա մարդկության պարմության մեջ անարարբերության մարմնով»:

Նախ՝ պիտի հանել «գրեթե» բառը, քանի որ արդեն իսկ մեկ դար է անցել այն սեւ օրերից, եւ ապա՝ հեղինակի հետ խորը ցավով հարցնել. իսկապես, ինչո՞ւ...

Ինչպես նշվեց արդեն, թուրք կառավարող դահիճներին պարմությունը շնորհել էր բարենպաստ հնարավորություն՝ Առաջին աշխարհամարտի թոհոբոհում իրագործել իրենց ոճրագործությունները: Աշխարհի աչքից ու ականջներից հեռու. ո՞վ կրեսնի, ո՞վ կլսի... Ներկա օրերը չեն, որ աշխարհի մի ծայրում ճանճը փրկա, մյուս ծայրում իսկույն կիմանան: Դրան գումարած՝ նաեւ թուրքական նենգ հաշվարկները, իրենց գարշելի արարքները աշխարհից թաքցնելու պապենական հունարը: Դրա վկայություններից է ամենամեծ ոճրագործի՝ Թալեաթի հեռագիրը Նալեպի կառավարիչ Մուստաֆա Աբդուլ-հալիբ բեյին 1915 թ. նոյեմբերի 8-ին. «Շատ կարեւոր է, որ օտարները համոզված լինեն, որ այս փրկահանումը միմիայն բնակավայրերը փոխելու նպատակով է կատարվում: Այդ պարճառով ժամանակավորապես կարեւոր է կեղծել ու սիրալիր վարք ցուցաբերել եւ ճանաչված միջոցները զիջառել՝ բացառությամբ հարմար վայրերի...»:

Եւ, այնուամենայնիվ, բաց երկնքի փակ կատարված անուր ողբերգությունների բոթը ծով ու ցամաքներ անցավ, հասավ փարբեր երկրներ, ներս մտավ դռներից ու լուսամուկներից՝ երբեմն արձագանք գրնելով, շար դեպքերում՝ ոչ:

Դեռ կոտորածների սկզբնական փուլում Անտանյի երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը, բողոքի նուրա են հղում Թուրքիայի կառավարությանը՝ երկրում հայերի հանդեպ կիրառվող անօրինակ ոճրագործությունների կապակցությամբ:

Առնող Թուրքիին մի ողջ ժողովածու է կազմում իր հավաքած վկայություններով՝ «Մի ազգի ոչնչացումը» խորագրով (1916 թ.): Փոքր-ինչ ավելի ուշ, 1918 թ. Թուրքիայում այն ժամանակներում ԱՄՆ դեսպան Ների Մորգենթաուն գրում է «Մի ժողովրդի պարմությունը» գիրքը, բայց, այս ամենով հանդերձ, որքան էլ զարմանալի է ու փխտոր, որպես պարմական իրադարձություն, այս ջարդն անփրկելի, միևնույնիսկ՝ մոռացության մարմնվեց: Եւ դարձյալ ու դարձյալ բոթը ազնիվ հոգիներում ակամա նույն հարցն է հնչում՝ ինչո՞ւ: Պարասխանը որոշակի չէ, բազմաբնույթ է, բազմաճյուղ, որն էլ հենց նպաստում է հարցերի ու պարասխանների խճողմանը եւ ոճրագործության իրական պարկերի մթագնմանը. մի բան, որ հազար ու մի միջոցներով հրահրվում, կազմակերպվում ու ներկայացվում էր ոճրագործների կողմից:

Սկսենք նրանից, որ բազմաթիվ կեղծ հաղորդագրություններից, լրարվամիջոցներով փարածվող սրահող հարցազրույցներից ու մեկնաբանություններից բացի, թուրքական կառավարությունը կազմակերպում է «Մպիտակ գիրք» կոչեցյալ ժողովածուի հրապարակությունը (1916 թ.), որի մեջ ժխտվում էր ոճրագործությունը եւ հայարարվում, թե թուրքական պարությունը գործել է իր շահերի օրինական պաշտպանությունից ելնելով:

Ինչպես հոգեվերլուծող Ժանին Ալթունյանն է նկատում, ոճրագործությունն իրագործած պարության ու նրա ժառանգորդների կողմից 1915թ. ցեղասպանության չճա-

նաչումը, ավելին՝ ամեն կերպ ժխտումը, ուրացումը թույլ չեն տվել, որ այն գրանցվեր արևմտյան հիշողության մաքրանում: Այս կապակցությամբ կարող ենք մեր կողմից ավելացնել, որ իրադարձություններից հետո գրավող երապացիները առավել հակված են եղել չհավաքալ, չընդունել երբեմն չստացած-չստացած նման անմարդկային արարքները, այն էլ՝ այդ չափով ու ընդգրկմամբ, քան՝ հավաքալ, մանավանդ, որ այդ ամենն ուղեկցվել է մի կողմից թուրքական կողմի հիսպերիկ ժխտմամբ ու ուրացումով, մյուս կողմից՝ հայերի լռությամբ կամ կցկտուր վկայություններով:

Ռիպա -Բ. Կույումջյանը մեջբերում է Նեկեն Պիրալյանի ճշմարիտ դիտողությունը, թե՛ ցեղասպանությունը ոչնչացնում է խոսքի դերը, քանի որ սարսափը նկարագրելու համար խոսքեր չկան. դա աննկարագրելի է: Ահա թե որքան լից էր գալիս հայերի լռությունը: Վերհիշենք մի քանի փող Էդուարդո Պերպոսյանի «Նայրիկ. մեկ ու կես միլիոն ձայնի լռության երևում» գրքից. «Այն ժամանակներում մեր մեծերը ցածրաձայն էին խոսում, նրանց ծածկագրերով բառերը չէինք հասկանում: Ոմանք ցավոք բացականչություններով գլուխներն էին շարժում: ...Այն ժամանակ բոլորս թույլ էինք անձանոթ վրանգի դիմաց՝ դա կարող էր մուրք գործել մեր սարերով, մեր դռներով...»: Ակամա հիշում ես Վիլյամ Սարգյանի աննման պարմությունը վերապրած երկու հայերի անխառն «գրույցների» մասին. ժամերով նստում են դեմ-դիմաց ու լռում, լռում...

Այդ երևույթի պարզառությունը շար են. եւ՛ Ն. Պիրալյանի նկարած խոսքի դերի ոչնչացումը, եւ՛ վերապրողներին անվերջ ուղեկցող վախն ու սարսափը, եւ՛ նրանց հոգեկան աշխարհում կարարված խախտումներն ու խաթարումները:

Ցեղասպանությունից հետո էլ, գրում է Ռ. -Բ. Կույումջյանը, շար հայեր վախի պարճառով չեն փոխանցել իրենց ապրումները: Նրանք, իբրեւ պաշտպանության ձև, որդեգրել են լռությունը՝ ցեղասպանության պարճառած ջղացնցումների մշտական վերանորոգման դիմաց: Դ-ա, մանավանդ, վերաբերում է Թուրքիայում հրաշքով ողջ մնացած հայերին, որոնց շարունակում էին հեղեղել մշտական խարականությունը, անվերջ հեղափոխումներն ու սպառնալիքը: Էլ նրանք կարճ էին բարձրաձայն խոսել այդ մասին, իրենց փեսան ու ապրածը փոխանցել այրոց: Եւ դա նրանց հոգեկան աշխարհում վերանորոգում էր ցեղասպանության դժոխքը:

Այդպես, ժառանգորդները մեծանում էին մի մթնոլորտում, որտեղ իշխում էր լռությունը՝ իբրեւ ծանր մի բեռ: Դրա հեղեղանքով ողբերգական անցյալը դառնում է աննկարագրելի եւ հաջորդ սերունդներին է փախանցվում դժվարությամբ, քանի որ, նշում է Կույումջյանը, դեպքերի պարմության վերականգնումը հայկական ինքնության կորուստ էր առաջացնում: Որպես վերապրողներ, հայերին անհրաժեշտ էր վերակառուցել իրենց կյանքը, մոռանալ անցյալի սարսափները: Եւ դա է, որ նրանց մղում է մտնել լռության մեջ. խոսել չէին ցանկանում, կամ՝ չէին կարողանում:

Եւ որքան էլ փարօրինակ է ու ցավալի, ցեղասպանության սարսափները փեսած, իրենց մաշկի ու ողջ Լույսի վրա զգացած վերապրողները ակամա, ինչպես ասում են, ջուր էին լցնում իրենց դահիճների ջրաղացին, որոնց նպատակը հիմա ոճրագործություններից հետք չթողնելը, ամեն ինչ պարտակելը, լռության քայքայիչ թողով պատելն էր:

Նազվադեպ էին այն վերապրողները, այն էլ, մեծ մասամբ ապահով վայրեր հասած լինելու բարեբախտությամբ, ովքեր բերան էին բացում, վկայություններ փալխա իրենց մերձավորներին՝ իրերը կոչելով իրենց անուններով: Այդ մերձավորներից մեկն էլ արդեն հիշարարկված Էդուարդո Պեպրոսյանն է, որ իր ասելով, ամեն ինչ լսել է իր ծնողների բերանից: Ներկայացվում է գնացքով աքսորելու մի պարկեր. «...Ամեն քայլափոխի ներկա էին մահը, կողոպույրը, ուրնձգությունը, կանանց բռնաբարումը: Քաղաք ժամանելիս թուրքերը ամենագեղեցիկների ընկրություն էին կատարում: Որոշ գյուղերում փղամարդկանց ուրբերն ու թներն էին կտրել: Կանանց կրծքերը թրով էին կտրում: Առարարյունահոսությունը մահից առաջ միակ թմրեցուցիչն էր»:

Որքան էլ սահմոկեցուցիչ են նկարագրությունները, ներկայացնելու ենք ես մի քանի փող՝ հասկանալու, որ եթե սոսկ լսելն է այսքան անփանելի, ապա որքան ավելի անփանելի է եղել այն մարդկանց համար, որոնք փեսել ու ապրել են այս դժոխային արարքները:

«...Փոսը վեց մեկը խորություն ուներ: Ընկա խառը կուրակված դիակների վրա: Մնացի անշարժ: Միայն սիրտս, անզգույշ, ինչպես միշտ, արագ խփում էր: Նազիվ էի շնչում: Աչքիս ծայրով կարողացա փնտնել հարյուրավորների մահը: Մի քանի գլուխ մարմնից անջատ էին ընկնում... Նորից էին խփում դիակներին, կարծես ցանկանում էին, որ այդ մարմինները վերակենդանանային, որպեսզի նորից սպանեին և կյանքի լքման գերագույն պահը կրկին փնտնեին»:

Նավաբական սպանության ծավալային ազդեցության հետևանքով, ասում է Կույումջյանը, շատ վերապրողներ, ինչպես Մայքլ Ադլինը (հայր), որպես հոգեկան խորը ցավի դիմաց պաշտպանության միջոց, ուրացան իրենց ծագումն ու հայկական ինքնությունը:

Նոգեբան հեղինակը շատ այլ բաների վրա ես ուշադրություն է դարձրել. ասենք՝ այրակերպման մեխանիզմի: Ավելի պարզ արտահայտելու համար դրա էությունը՝ նա գրում է, թե հայերը, իրենց գլխով անցածը նկարագրելիս, իբրև պաշտպանական միջոց, պարսմում էին ուրիշի անունից: Այդ բանի ցայտուն օրինակներից է Աբրահամ Ն. Նարությունյանի «Ո՛չ ծիծաղել, ո՛չ լացել» հուշագրության հետևյալ հարվածը. «Օգոստոսի 7-ն էր (այդ օրը հրաման էր արձակվել, թե բոլոր հայերը պիտի գեներերը հանձնեն, այլապես՝ կգնդակահարվեն): Դժոխքի օրը... իրար շղթայված, փողոցներով նրանց փարան սպանողանոց... Ոմանց մորթեցին, մյուսներին փարան Ադուր լեռան սրբորդը և այլնայն, բազմության աչքի առաջ, գնդակահարեցին: Ճգնում էին ողջ մնացածների գանգերը:

Այդ սարսափելի փեսարանի ակնապեսն էր եղել գերմանացի բարի միսիոներ Ներ Սպիկերը: Ես նրա կողքին էի: Մի քանի շաբաթ անց Ներ Սպիկերը մահացավ՝ չկարողանալով դիմանալ այդ անարդարություններին: Նայի կրծքում մեխված թուրը ներթափանցել էր նաև նրա կուրծքը: Նույնը պարահեց Այնթապի միսիոներ բժիշկ Շեփարտին, որն իր փանը մահացավ՝ սիրտը ճգնված Ուրֆայի հայերի փանջանքի պարճառով»:

Մեջբերելով այս փողերը՝ Ռ. Կույումջյանը նկատում է, որ փանջանքների պար-

ճառած անհանդուրժելի, ծայրահեղ ցավի և կյանքից հեռանալու միջև կա փոխադարձ կապ:

Այդպես՝ հազար ու մի ձևերով հայկական ցեղասպանությունն իր գոհերի վրա ունեցել է քայքայիչ ազդեցություն, որ փոխանցվել է նաև ժառանգորդներին: Այդ զգացողության գիտակցումը վերապրողների մեջ ծնել է մեղքի զգացում: Բայց դրանից էլ առաջ նույն այդ զգացողությունը մշտապես հեղափոխել և ուղեկցել է գրեթե բոլոր վերապրողներին նրա համար, որ իրենց աչքերով այդքան մահ ու կոտորած են տեսել, հարազատների, ընկերների խոշորացում ու մահ, բայց դեռ շարունակում են ապրել, կարծես՝ դավաճանել են գոհվածներին:

Կան և մեղքի զգացման այլուայլ դրդապարճառներ: Նրանցից մեկն էլ՝ հայ լինելն է: Նայ է, ուրեմն՝ հենց դրանով մեղավոր է, դատապարտված է մահվան: Եւ ո՛չ միայն ինքը, այլև՝ իր ժառանգները... Է. Պեպրոսյանի գրքում կան այսպիսի փողեր. «Ամոթ էի զգում հանդիսարանի իմ կարգավիճակից: Ննարավոր չէր նրանց նայել օտարի պես, առանց մեղքի զգացումի»:

Բայցև՝ նույն հեղինակի մոտ կարելի է հանդիպել այլ զգացողությունների. վերապրելու և հիշելու պարբերականությունների: «Ուժասպառ, դատարկ կրճերով մայրերն իրենց թուլացած գավակներին հորդորում էին. Որդի՛ս, չպեղք է մահանաս, պիտի դու ապրես, որ մեր մահն իմաստ ունենա... Բեզանից ենք կախված: Բեզանից, յուրաքանչյուր երկրասարդից է կախված մեր անմահությունը: Թույլ մի՛ Կուր, որ հողը ծածկի մեր արյունը: Յուրաքանչյուր վերապրող մի հաղթանակ է լինելու: Մեր ժողովուրդը հաղթված ծառի է նման լինելու, որը մահանալուց առաջ կյանքի մի սերմ է զգում հողի վրա»:

Նորդորում են չհանձնվել, դիմանալ ու հիշել. «Լռությունը ևս հրաժարումը մահվան թակարդն են»:

Սա արդեն դիտարկված նոր երևույթ է, հույսի շող, վերապրելու պարասխանաբերության ու անհրաժեշտության զգացողություն՝ ի հակադրություն վերապրողների համախորանիշ համարվող հոգեֆիզիկական մի շարք հիվանդությունների՝ թախիծ, ընկճվածություն, վախվորածություն... Բայց դա, որքան էլ ցանկալի, համապարփակ բնույթ չի կրում: Նիմնականը նման ողբերգություններից հետո ծայրահեղ ցնցումների և դրանց հաջորդող հոգեկան խանգարումների ու խախտումների երևան գալն է: Դրանով շարք հոգեբաններ ու վերլուծաբաններ խոր փոխկապակցություն և ընդհանրություններ են տեսնում հայկական ցեղասպանության և հրեական Նոթրոստի միջև: Նրանցից է ցեղասպանության և միջազգային իրավունքի ճանաչված մասնագետ Վահագն Ն. Տադրյանը, որ նշում է կարևորագույն մի առանձնահատկություն՝ «թուլության հարույժ մի տեսակ, որպես իշխող և փոքրամասնական խմբերի միջև ուժի անհավասար հարաբերակցության հետևանք: Նայերն ու հրեաները պետությունների կողմից դարձրել շարունակ անարարություն մարմնաված փոքրամասնությունների նույն կարգավիճակն էին վայելում»:

Կանգ չառնելով նշված այլ ընդհանրությունների վրա, պիտի նշել երկու ցեղասպանությունների հիմնական տարբերությունը: Նրանք տարբերվում են պարփի հարցում:

Նայոց ցեղասպանությունը այլևայլ պարճառներով (որոնց մասին խոսեցինք) լայն ճանաչում չստացավ աշխարհում և դրանից օգտվելով, թուրքական կառավարությունը ամուր կառչեց ուրացումից, ժխտումից և հարյուր փարի հեպտ էլ դեռ խուսափում է արժանի պարծից: Իսկ հրեական Նոյեմբերը լայն արձագանք չգրավ մարդկության դարի առջև: Եւ պերք է նկատել, որ դրանում շար մեծ էր նաև հայկական թեկուզեւ «մոռացված» անունն սրացած ցեղասպանության դերը, քանի որ այն ժամանակներից սկսած Անվարի պետությունների շնորհիվ ներմուծվում է «մարդկության դեմ ոճրագործություն» հասկացությունը, որպես միջազգային իրավունքի դարական նոր կանոն: Եւ, վերջապես, պերք է նկատել ունենալ և այն, որ հրեական Նոյեմբերը «ժառանգորդն» էր հայկական ցեղասպանության, որի կանխազգացողներից առաջինը պիտի համարել միջազգային իրավունքի լեւ մասնագետ Ռաֆայել Լեմկինին:

Նակառակ մարդկության պարմության երևելի դահիճներից մեկի՝ Նիլդերի, 1939 թ. օգոստոսին, բանակին ուղղված ելույթում ցինիկորեն հնչեցրած հարցի, թե «այսօր ո՞վ է խոսում հայերի ոչնչացման մասին», Ռ. Լեմկինը 1933 թ. միջազգային ոճրագործությունների հարցերով փաստաբանների հավաքի ժամանակ բողոքին նախազգուշացրել էր Նիլդերի դիրքի ամրապնդման և սպառնալիքի նոր աղերների մասին՝ հիշեցնելով հայերի հանդեպ իրագործված ոճրագործությունների մասին և եզրակացնելով. «Եթե մի անգամ պարահել է, էլի՛ կպարահի, եթե այնուրեղ է պարահել, ապա այսուրեղ է կարող է պարահել: Ուստի, նման բաները կանխելու համար, աշխարհի պետությունները պիտի համարել արշավ սկսեն»: Յավոք, Լեմկինի րագնապը լուրջ էին ընդունել, իսկ հայերի հանդեպ թուրքերի իրագործած բարմնելի արարքները շարերը համարել էին «արեւելյան երևույթ»...

Բայց Լեմկինը չէր հանգստանում, և գալիք իրադարձությունները եկան հաստատելու, որ նրա անհանգստությունն ու րագնապը գուր էին. հրեական Նոյեմբերի ժամանակ նրա ընրանիքը ևս կորցրեց 49 հոգու: Եւ նա, րառապազին մարդունների մեջ, սրելոճեց «ցեղասպանություն» բառը՝ կազմված հունարեն «genos» (ցեղ, ժողովուրդ) և լարինեքեն «cide» (սպանել, մեղցնել) միավորներից:

Եւ նա սահմանեց ցեղասպանության էությունը՝ որպես ազգային, կրոնական կամ ցեղային խմբի համակարգված և ծրագրված բնաջնջում, որն իրականացվում է րարբեր ճանապարհներով և ուղղված է այդ խմբի հարարեւման հիմունքների դեմ: Անշուշտ, կարելի է և այլ սահմանումներ րալ, ինչպես, ասենք, Ռ. Զ. Մույումջյանինը. «ցեղասպանությունը սարսափի զանգվածային գործադրումն է, որի նպարակն է մի ժողովրդի ամբողջական վերացումը բոլության, սրորացման և բնաջնջման փորձերի կիրառմամբ՝ կարգապահության և անվրանգության պաշրպանության համար օրինականության բողի րակ պետությունների թաքնվելու միջոցով»: Կարելի է և այլ կերպ սահմանել, բայց էությունը հիմնականում նույնն է: Մի սարսափելի հրեշ է, որ է՛լ ավելի սարսափելի է դառնում, երբ նրան ծողները ուրանում են նրա գոյությունն ու, մանավանդ, իրենց կապը նրա հեպ:

Իսկ դա, ինչպես նշում են հոգեվերլուծաբանները, մեծապես ազդում է «վերապրող-

ների և հեղափոխության սպառնալուծության վրա»։ Եւ դա չէ՞ նաեւ պարզապէս, այդ ուրացումը, ռճրագործների անպարժելիությունն ու դրանցից բխող լուրջ վտանգի վերաբերյալ հիշողության մեջ հայկական ցեղասպանությունը հարկ եղածի պէս չի փայտաւորուի, ինչը, դարձեալ հոգեբանների լեզուով ասած՝ «ճակարագրական հերք է թողել սգո հոգեկան մշակման գործում»:

Եւ լուրջութեամբ այդպէս ձգվել-երկարել է... մինչեւ Ի. դարի 50-60-ական թվականները, երբ շրջադարձ տեղի ունեցավ հայկական ցեղասպանության հիշատակման հարցում:

1950 թ. Անթիլիասում (Լիբանան) կառուցվեց հուշարձան հայկական ցեղասպանության գոհերի հիշատակին: Այդպիսի մի հուշարձան էլ 1961 թ. կառուցվեց Բուենոս Այրեսում, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարևանությամբ, հեղափոխում՝ նաեւ այլ վայրերում:

Սակայն, ամենանշանակալիւն ու լուրջութեամբ մասնաւորապէս, անշուշտ, եղավ Ղալաթի մայրաքաղաք Երեսուում, Ծիծեռնակաբերդ կոչվող բլրի վրա կառուցված խորախորհուրդ մեծ հուշարձանը (որի բացումը տեղի ունեցավ 1967 թ.) Ղալաթի մայրաքաղաքի Սովետական կայսրության կազմում էր և հեշտ չէր այն ժամանակ խոսել ցեղասպանության մասին, «վիրավորել» այս կամ այն տեսակետներ՝ առանց Մոսկուայի իմացության ու թույլտւոյի: Սակայն 1965թ., ցեղասպանության 50-ամյակի շնորհիւ, ժողովրդական գայտոյթը պտղեաց, դուրս եկավ ափերից և սթափություն ու զարմանք հարուցեց ոչ միայն Սովետական երկրում, այլեւ՝ ողջ աշխարհում: Նոյն և մտքիկ շարքի մարտնչներ, գիտական կառույցներ ու անհատ մարդիկ սկսեցին քրքրել արխիւները, հնարավոր բոլոր միջոցներով յայտնաբերել իրենց հետաքննարկելու փաստեր ու վկայություններ: Դա աննկարագրելի գործը հարված էր նախ և առաջ ցեղասպան պետության՝ Թուրքիայի համար: Իսկ նրան ի՞նչ էր մնում, քան իրեն պարել ժխտման և ուրացման է՛լ ավելի անթափանց քող ու թաղիքով: Սակայն, հայրենաբերվող մեծ կամ փոքր ամեն մի նոր վկայություն ու հիշատակ մի նոր, ծանր հարված էր ճաքել տալով, այս ու այն կողմից պարտաւոր այդ ծածկույթին, որ գնալով սաստկանում է ու վերածվում թուրքերին խլացնող թմբկահարության:

Պարտվել է նաեւ մեզ պարտադրված լուրջութեամբ, որի ծվեններն ենք ուրախութեամբ ամեն փարի ապրիլի 24-ին, աշխարհի չորս կողմերից Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելող հազար-հազարավոր հայտնիների ու նաեւ բազում այլազգիների հետ մեկտեղ՝ խոնարհվելով ցեղասպանության անմեղ գոհերի հիշատակի առաջ...

Ժամանակին այդ հուշարձանին իր խոնարհումն է բերել նաեւ Մայր Աթոռ Սուրբ Երանք, որ հետո իր պարտքն է համարել պարգանել բոլոր հայտնիներին. «Աշխարհի բոլոր հայերը պետք է այցելեն այդ հուշարձանը (...) Յուրաքանչյուր հայ պետք է հասկանա հուշարձանի նշանակությունը և իր ոսկորներով զգա Ղալաթի ողբերգությունը (...) Ղալ ժողովրդի փառանքը հսկայական է եղել (...) Մեզ համար անհրաժեշտ է խոսել այդ մասին: Ղալ լինելը հոգում փոխանցան այդ անհանդուրժելի բերք կրելն է: (...) Ղալերը երբեք չեն կարողանա մոռանալ իրենց հետ պարտաւոր: Պետք չէ մոռանալ: Յեղասպանություն է եղել: Աշխարհի առաջին ցեղասպանությունն է եղել»:

Դա՝ հայերի պարագային: Ո՛չ մի հայ, այո՛, չպետք է մոռանա ու չի՛ էլ կարող մոռանալ պարսիսածը՝ ոչ միայն ոճրագործություններին գոհ գնացած միլիոն ու կես հայրենակիցների անմարդկային կոտորածների պարճառած կսկիծի, այլև վերապրողներից շարերի հոգեկան խանգարումների, սերնդից սերունդ փոխանցվող ախտանիշների, ինչպես նաև ոճրագործների դժոխային նպատակներին դեմ գնալու, ո՛չ մի դեպքում չհանձնվելու, վերստին ապրելու և ազգովին հարապրելու վճռականությամբ:

Բայց... չպետք է մոռանան նաև ցեղասպանությունն իրագործած երկրի բոլոր այն մարդիկ, ովքեր հիշյալ իրադարձությունները իրենց երկրի խարան ու խայտառակությամբ են համարում և այն մեղմելու միակ միջոցը համարում են կապարվածը չժխտելու, չուրանալու ճանապարհով գնալը, կապարվածի համար անկեղծորեն զոջալը, խորապես ցավելն ու անմեղ գոհերի ժառանգորդներից ի լուր աշխարհի ներողություն հայցելը, ինչպես դա անում է թուրք գրող Քեմալ Յալչինը: «Խոնարհվում եմ,- գրում է նա,- այդ հսկա ցավի առաջ, մարդկությանը սևացնող ջարդերի առաջ, ծրագրված քրեականությունների ճանապարհին իրենց կյանքը տված բոլոր հայերի և ասորիների հիշատակի առաջ: Ձեր տանջանքն իմ տանջանքն եմ համարում: Որպես թուրք մտավորական, ձեզնից և ողջ մարդկությունից ներողություն եմ խնդրում»:

Բայց Ք. Յալչինը դյուրությամբ չէ, որ հասել է նման գաղափարի և վարվել այսպես: Նախապես նրան վիճակվել է ծանոթանալ Թուրքիայի Երոսպայում բնակվող քաղաքացիների (այդ թվում՝ նաև հայկական ծագում ունեցող) պարմություններին ու տրամադրած վկայություններին, ապաև հատուկ այդ նպատակով շրջել է պարմական Նայաստանում, գանազան միջոցներով ձեռք բերել նոր նյութեր ու վկայություններ և համոզվել, որ գաղտնի շրջանառվող լուրերը անհիմն չեն, իսկապես կապարվել է նախապես ծրագրված ոճրագործություն իր բնօրրանում ապրող ժողովրդի, նրա զավակների հանդեպ, որոնց միակ մեղքը եղել է հայ լինելը:

Բարեբախտաբար, թուրքական մտավորականության շրջանում Ք. Յալչինը բացառություն չէ: Գրքում հանդիպում ենք նաև Նորելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկի, Թաներ Աբջամի անուններին: Մեր կողմից ավելացնենք, որ գնալով նրանց գումարվում են նոր անուններ, ովքեր չեն վախենում կրել իրենց ազգային ինքնությունն անարգողի մեղադրանքն ու պիտակը, որ նշանակում է հալածանք, բռնություններ, կալանք...

Ճշմարիտ է Թաներ Աբջամը՝ գրելով. «Թուրքական պետությունը կառուցվել է սեփական հասարակական իրականության և էթնիկական, կրոնական ու մշակութային տարբեր խմբերի ուրացման հիման վրա: Այդ խմբերը Թուրքիայի անվտանգության համար համարվել են «խնդիրներ» և «սպառնալիք»: Այդ պարճառով էլ,- ավելացնում է Թ. Աբջամը,- պաշտոնական դիրքորոշումն է ոչ միայն անտեսել կամ կեղծել հայկական ցեղասպանությունը, այլև՝ էթնիկական և կրոնական այլ փոքրամասնությունների պարմությունը»:

Դժվար է ճանաչված թուրք մտավորականից ավելի լավ ներկայացնել ու բնորոշել Թուրքիայի պաշտոնական դիրքորոշման էությունն այս հարցում: Ու որքան էլ ամուր լի-

նեն այդ կարծրաքիսյան ու սերնդեսերունդ արմատավալած ու քարացած համառությունը, միևնույն է, նրանք Կրեդի են Կրալու, քանի որ մի կողմից՝ վաղուց արդեն փշովել է պարսպադրված ու իրենց մեծապես օժանդակող մեր լռությունը (հրաշքով վերապրած մեր հարագափնների լռությունը) և մյուս կողմից՝ արթնացել ու սթափվել է աշխարհը, վերանայում է անցյալի պարամությունը և հայ ժողովրդի հանդեպ գործադրված սարսափելի ոճրագործությունը վերագրում է ողջ մարդկությանն ու չի կարող ներել, քանի դեռ ոճրագործ պեպության ժառանգորդները չեն ընդունել նախնիների մեղքը և իրենց երկրի ու ժողովրդի կողմից ներողություն չեն հայցել ողջ մարդկությունից:

Այս է, ահա, Ռիպա Քրիստինա Կույունջյանի «XX դարի առաջին ցեղասպանությունը. Հայկական հիշողության վերադարձը» գրքի հիմնական գաղափարը, որ թեև երբեմն մթազնում է ցեղասպանության դաժանությունների վերհիշումներով ու մեջբերումներով, այնուամենայնիվ, շնչում է լավարեսությամբ և մեր ժողովրդի ապագայի հանդեպ աներեր վստահությամբ:

ԵՐՎԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ